

9(47-925)

թիվ 1

4-23

48

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Կ. 124
Բ. 11

11

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1914-15 ՇՐՋԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ Ա.

19 Մայիս 1914



Յաղագրութիւն Տ. ՏՕՂՐԱՄԱՃԱՆՆ

Կ. ՊՈԼԻՍ, Պապր-Ալի ձառոնէսի, Թիւ. 49

1914

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

(Ա. Վ. ինակ)

1. Տ. Արքեպս. Դուրեան
2. Տ. Վաղ. ամ. Մանկունի
3. Տ. Զարմայր. քհնյ. Կէղիւրեան
- 4.

(Բ. Վ. ինակ)

5. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
6. Տ. Գրիգորիս Ժ. Վ. Պալազեան
7. Տ. Երուանդ Ծ. Վ. Բէրտաճեան
8. Տ. Սմբատ Ծ. Վ. Գաղաղեան

(Գ. Վ. ինակ)

9. Տ. Շմայեակ Արքեպս. Դիմաքսեան
10. Տ. Մաղաքիա Եպիսկ. Տէրունեան
11. Անանիա Վ. Հաղարապետեան
12. Տ. Միքայէլ քհնյ. Աշեան

(Դ. Վ. ինակ)

13. Տ. Արիստակէս Ա. Բհնյ. Զիզմէճեան
14. Տ. Խորէն. Զարուհիւնեան
15. Տ. Զուսիկ. Բաջունի
16. Տ. Տաճատ. Փաշայեան

(Ե. Վ. ինակ)

17. Տ. Եղնիկ Ծ. Վ. Պապանեան
18. Տ. Շմայեակ Բաճ. Էքսէրճեան
19. Տ. Բարձր. Թաղմէճեան
20. Տ. Արէլ. Երէցեան

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վ. ինակ)

Ելուպ Ս. Եղիա

21. Օննիկ էֆ. Մինասեան
22. Պետրոս էֆէնտի Հալաճեան
23. Պետրոս. Խորասանեան
- 24.

Մագրիգիւղ

25. Երուանդ էֆէնտի Պէյազճեան
26. Թագուր. Արեւեան
27. Տօքթ. Մալխասեան
28. Զակոր. Պոյաճեան
29. Զովհաննէս. Իսապուլեան
30. Սարգիս. Պէճրէկեան
- 31.

Պէտլիւքուէրէ

32. Արշակ էֆէնտի Ալպոյաճեան
33. Զովսէփ. Գաղաղեան

Սան-Սթէֆանո

34. Գէրգ. էֆ. Ապանեան
35. Խ. Իլկ էֆէնտի Սըվաճեան
36. Տ. Բ. Ստեփան էֆէնտի Թէրզեան

(Բ. Վ. ինակ)

Բերա-Դասը Բ-Փաշա

37. Աստուածատուր էֆէնտի Իւլապուրեան
38. Արամ. Շ. լաճեան
39. Արմենակ. Բալսեղեան
40. Գէորգ. Թորգման
41. Գիգոր. Շահլաճեան
42. Զովհաննէս. Զէօկիւսեան
43. Սարգիս. Մինասեան
44. Տր. Վ. Թորգոմեան
45. Զտեփան. Գարաեան

Գարեթալ-Գնալը

46.

Գուրուշէշմէ

47.

Պէշիկթաշ

48. Տրդատ Պէյ Տատեան

Ֆէրիգիւղ

49. Եղուարդ էֆէնտի Գարակէօգեան
50. Հրանտ. Ասատուր
51. Մարկոս. Նաթանեան
52. Զակոր. Պահրի

(Գ. Վ. ինակ)

Գատրգիւղ

53. Անտոն էֆէնտի Թալազ
54. Աղաթի. Ալաճեան
55. Եղուարդ. Դիլիճեան
56. Ներսէս. Օհանեան
57. Մկրտիչ. Աբգարեան
58. Պենէ. Թորոսեան
59. Սարգիս. Էսմէրեան

Եէնի-զարու

60. Պենտոն էֆէնտի Տէլիբէյեան
61. Վահան. Փափազեան

Պալաթ

62. Տօքթ. Կարապետ էֆէնտի Խաղուպեան
63. Զարուհիւն էֆ. Մոստիլեան
64. Սարգիս. Սրենց
65. Հրանտ. Անդրէասեան

Սկիւտար Եէնի-մաթալլէ

66. Թորգոմ էֆէնտի Պոյաճեան
67. Հմայեակ. Խոսրովեան
68. Վահան. Սուրենեան

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1914—1915 ՆԱՏԱՇՐՋԱՆԻ

ՆԻՍՏ Ա.

19 ՄԱՅԻՍ 1914

Ն Ա Խ Ա Գ Ա Հ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԶԱՅՐ

Ա Ռ Ժ. Ա Տ Ե Ն Ա Պ Ե Տ. — ԱՐԻՍՏԱԿԷՍ ԷՖԵՆՏԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ

(Ատեանը բացուեցաւ ի ներկայութեան 55 Երեսփոխաններու որոց թիւը յետոյ յանգեցաւ 72ի : Ատեանը բացուելէ անմիջապէս յետոյ, Ս. Պատրիարքը կարդաց հետեւեալ բացման ճառը :)

«Տեարք երեսփոխանք,

«Ազգ. Պատկառելի ժողովիդ նոր տարեշրջանի բացումը կատարելու բարեբաղդութիւնն այսօր ինծի վիճակած ըլլալով, հարկ կ'իմաստարիմ հակիրճ տեսութիւն մը ընելով իրաց կացութեան մասին՝ իմ այս պարտականութիւնս կատարել :

Վերջացող տարեշրջանի բացման առաջին մեր ժողովուրդը տաճնապաներ կ'անցնէր իր բնիկ հայրենիքին մէջ եւ Պատրիարքարանս զանոնք մեղմացնելու եւ անոնց միանգամ ընդ միշտ վերջ

տալու միջոցներուն վրայ կը խորհէր : Կեդր. Վարչութեան շանքերը բարեբախտաբար ապարդիւն ջանքան եւ այսօր մեր ժողովուրդին վիճակը համեմատաբար լաւագոյն կրնայ համարուիլ սնցեալ տարուինէ : Այժմ երեւցած այս բարեկաւումը բնական է թէ առժամանակեայ եւ առերեւոյթ պիտի մնայ, մինչեւ որ կայսերական կառավարութիւնը օսմանեան փառապանծ դրօշին ներքեւ դարերէ ի վեր ապրող Հայ ազգին հաւատարմական անկեղծ զգացումներուն համաձայն յարատեւ դարձնէ զայն եւ ապահովէ մեր իրաւունքները : Ցայտնի է ձեզ Տեա'րք երեսփոխանք, որ տարւոյս ընթացքին մէջ հայաբնակ նահանգներու բարենորոգման ծրագիր մը մը շակուեցաւ, զոր գործադրութեան դնելու արդէն ձեռնարկներ կ'ըլլան հի-

2012 4431-55



98347-42

մայ: երկրին վարչներուն իմաստութիւնն եւ հայրենասիրութիւնն ինծի յոյս կ'ներշնչեն որ այդ նախագծներուն դրժքախտ ժողովրդեան ապահովութիւնն ու զարգացումը երաշխաւորող ամէն միջոց ի գործ պիտի դրուի, եւ այս՝ ոչ թէ իբրեւ յանձնառութիւն՝ այլ իբրեւ պարտականութիւն, քանի որ օսմանեան երկրին սիրտը կը համարուին այդ նախագծերը իրաւամբ:

Հետեւաբար Պատրիարքարանիս վարչական ժողովներն ամէն ժամանակէ աւելի աշխատութեան ընդարձակ ասպարէզ մը ունին այժմ իրենց առջեւ թէ՛ գաւառական վարչութիւնները արդիւնաւոր գործունէութեան մղելու եւ թէ՛ կառավարութեան ծրագիրներուն գործադրման օգնելու համար:

Մեր ժողովուրդը այժմ ամենէն աւելի մոտամտող եւ տառապեցնողը Զինուորութեան նոր օրէնքն է, որուն համաձայն, ընտանեկան նեցուկներն ալ սկսան զէնքի տակ առնուիլ: Վերջին տարիներու քաղաքական ցնցումներէն խորապէս ազդուած այս երկրի ժողովուրդին չեմ կարծեր թէ շատ յարմարի այսպիսի օրէնք մը: Ներքին գաւառներուն մէջ բնակող օսմանեան բոլոր տարրերուն հետ Հայն որքան ալ նուիրական պարտականութիւն ունի հայրենիքի պաշտպանութեան համար ամէն զոհողութիւն ու անձնուիրութիւն ընելու, սակայն չեմ կարծեր թէ ուրիշ երկիրներու մէջ գործադրուած այս օրէնքը մեր ժողովրդեան այժմեան վիճակին յարմարի լիովին: Կը յօռամ թէ հացակարօտ որբերու եւ այրիներու արցունքները ի գուժ պիտի շարժեն Օսմանեան Խորհրդարանն ու նախարարութիւնը այս օրէնքին մէջ բարեփոխութիւններ մտցնելու:

Ազգ. վարչութիւնն ու իր նախագահը իրենց հայրենասիրական պարտականութիւնը պիտի կատարեն արդէն եղած դիմումները շարունակելով, որպէս զի ժողովրդեան քայքայուած

տնտեսութիւնը կործանման չհասնի ի վնաս օսմանեան հայրենիքին:

Ազգ. վարչութիւնը հազիւ իր պաշտօնին գլուխն անցած՝ գնահատելի կորուով մը կ'աշխատի իր օրակարգին մէջ գտնուած խնդիրներուն լուծման: Արդէն յայտնի է ձեզ որ Պատ. ժողովէդ քուէարկուած երուսաղէմի բարեկարգութեան կանոնագիրը գործադրելու ձեռնարկած է, ձեր ներկայացուցիչը վարչական պատուիրակութեամբ մը երուսաղէմ դրկելով: Հաստատապէս կ'յուսամ որ իր ձեռնարկը յաջողութեամբ պտակուի, եթէ ձեր վստահութիւնը չի դադրի իրեն զօրավիգ ըլլալէ:

Անցեալ տարեշրջանի մէջ Պատկ. ժողովը եւս բաղդը ունեցաւ ընդհանուր ազգին հետ տօնելու Հայ գրոց գիւտի եւ տպագրութեան յոբելեանը: Մեր ազգին քաղաքակրթութեան այս տօնը այսքան խանդավառ զգացմամբ տօնուելէ յետոյ, վարչութիւնը առիթէն օգտուելու զգաց կրթական դրամագլուխ մը կազմելու համար: Այս նպատակաւ կազմուած յանձնաժողովը արդէն գործի ձեռնարկած ըլլալով, յոյս ունիմ որ այս անգամ իր ջանքերը պիտի արդիւնաւորին:

վարչութիւնը իր օրակարգին մէջ ունի նաեւ քանի մը ստիպողական եւ կենսական խնդիրներ, ազգ. կալուածոց սեփականութեան, շարքեւական, ազգային ընկերութեանց, եւն. որոնք հետզհետէ իրենց լուծումը պիտի ստանան անտարակոյս:

Պատրիարքարանն անշուշտ ոչ մէկ ջանք կը ինայէ ազգին բոլոր դիմումներուն արագ գոհացում տալու: Արդէն այն ամէն խնդիրները՝ որ Կայս. կառավարութենէն կախում ունին, օրը օրին կը ներկայացուին պատկանեալ պաշտօնատանց: Մեր դիմումներով երկրին վերքերը կը մատնանշենք մենք, ուստի վստահ ենք որ կառավարութեան հայրենասէր վարիչները՝ որ օսմանեան հայրենիքի ապագան լուսագոյն հիմերու վրայ դնելու ամէն ջանք ի գործ կը դր-

նեն, այսուհետեւ եւս պիտի ընդունին զանոնք իբրեւ հայրենիքի անկեղծ եւ ցաւսիրտ զաւակներու դիմումներ: Սահմանադրական երկիրներու մէջ ամէն անհատի պարտականութիւնն է հայրենիքի զաւակներուն եղած զրկանքները պատկանեալ իշխանութեան ցոյց տալ եւ անոնց դարմանը պահանջել: վարչութիւնն ու իր նախագահը իրենց այս Սահմանադրական պարտականութիւնն է որ կը կատարեն:

Դիտելի է որ վերջացող նստաշրջանին մէջ Ազգ. ժողովիդ աշխատութիւն պատճառած են գլխաւորաբար վարչութեան հրաժարմամբ պակասած անդամներուն տեղ կատարուած նոր ընտրութիւններն եւ յետոյ վարչութեան հաւաքական կազմին փոփոխութիւնը: Հարկ չեմ տեսներ անդադառնալ այս վերջին պարագային մէջ տեղի ունեցած վիճաբանութիւններուն վրայ, քանի որ անոնց յիշատակն թարմ է մտքերու մէջ, բայց իբրեւ նախագահ Ազգ. ժողովոց եւ Խորհրդոց, պէտք կը զգամ դիտել տալու որ այսպիսի փոփոխութիւններ Ազգ. գործերու ընդհանուր ուղղութեան վրայ նպաստաւոր ազդեցութիւն չեն բերեր: Հետեւաբար այս ժողովն իր վստահութեան քուէով ազգին գործերը վարելու համար մարմիններ ընտրելէ յետոյ, հարկ է որ այլ եւս անոնց աջակից գտնուի, անշուշտ ի հարկին պէտք տեսնուած ուղղութիւնը տալով անոնց:

Պատրիարքարանն իբրեւ թուրքոյ Հայութեան վարչական կեդրոն, ամէն կողմէ եղած բազմադիմի դիմումներուն գոհացում տալու պարտաւոր է. ասոր համեմատ համար անհրաժեշտ է որ այս կեդրոնը իր դիրքին ու պէտքերուն համաձայն կազմակերպութիւն մը ունենայ: Նախորդ վարչութիւնը Պատրիարքարանի կազմակերպութեան թերութիւնները եւ անոնց պատճառաւ գործերուն դանդաղումն ու ազգին դժգոհութիւնները տեսնելով, Պատրիարքարանի ներքին վերակազմութեան ծրագիր մը

պատրաստած եւ Պատ. ժողովիդ քննութեան եւ վաւերացման ենթարկած է: Այս ծրագիրը տակաւին ժողովիդ սեղանին վրայ կը մնայ: Հարկ կայ ըսելու թէ մեր ժողովուրդը ո՛րչափ կը տուածէ այս պատճառաւ:

Այս ծրագիրը չպիտի կրնայ գործադրուիլ անշուշտ, մինչեւ որ Պատրիարքարանի պիւտճէն չհաւասարակըշուոյի, մեր կարեւոր հասոյթը եղող ազգային տուրքը ամէն ազգային անհատի պարտաւորիչ դարձնելով: Այս նըպատակաւ ալ տրոց բաշխման եւ գանձման կանոնագիր մը շինուած նախորդ վարչութենէն Պատկ. ժողովիդ մատուցուած է: Այս տակաւին կը մնայ սեղանի վրայ:

Իսկ Պատրիարքարանի պիւտճէն առանց վաւերացման կը գործադրուի արդէն:

Հարկ կայ, Տեառք երեսփոխանք, ձեզ յիշեցնելու որ Ազգ. Ընդհ. ժողովիդ գլխաւոր պարտականութիւնն է, ըստ Ազգ. Սահմանադրութեան՝ պիւտճէն բնեւ եւ վաւերացնել, օրէնքներ քուէարկել եւ վարչութեանց հարաբատուութիւնը լսել: Արդ, վերջին տարիներուն մէջ պիւտճէ վաւերացուցած չենք, իբրեւ օրէնք միմիայն երուսաղէմի կանոնագիրը քուէարկած ենք եւ նախկին Կոն. ժողովներուն համաբատուութիւնները տակաւին կը մնան սեղանի վրայ:

Եւ երբ անոնց վրայ լաւեցնենք հետ լիտէ վարչութեան կողմէ ձեր ընտրութեան եւ վաւերացման ենթարկուելիք կրթական ծրագիրը, վանօրէից եւ ամուսնական դատաւարութեան կանոնաքիւրները, եւն. կը տեսնուի թէ ո՛րչափ աշխատութեան նիւթ պիտի գտնէք ձեր սեղանին վրայ այս տարեշրջանին համար:

Դոհացուցիչ է որ անցեալ շրջանին հոգ տարուեցաւ ամբողջացնելու պակաս մնացած երեսփոխանական ընտրութիւններ, այնպէս որ այսօր հազիւ 12 երեսփոխան կը պակսի եւ անտարա-

կոյս այն ալ պիտի լրանայ ի մօտոյ եւ Ազգ. ժողովը իր օրինական 71 անդամոց ներկայութեամբ պիտի գումարէ իր նիստերը: Սահմանադրական շրջաններու մէջ երեսփոխանական այսքան ստուար մեծամասնութեան գրեթէ չենք հանդիպիր. հետեւաբար փափաքելի է որ այլ եւս մեծամասնութեան բացակայութեան պատճառաւ ապարդիւն նիստերու յիշատակութիւնը չըլլայ, պարագայ մը՝ որ այնքան վիատեցուցիչ տպաւորութիւն առաջ կը բերէ:

Անցեալ տարեշրջանին սկիզբը, Ազգ. ժողովի օրակարգին վրայ կը գտնուէին շատ մը խնդիրներ նախորդ շրջաններէ մնացած, որոնք գրեթէ ամեն նիստի նիւթերը կ'ստուարացնէին՝ առանց ուրիշ լուծում ստանալու: Այս խնդիրներուն նոյնութեամբ շրջանէ շրջան փոխանցումը տեսակ մը գայթակղութեան առիթ եղած էր: Գոհունակութեամբ կը յիշեմոր Պատկ. ժողովի խմբակցութիւնը համաձայնեցան այս խնդրոց համար դիւանէն առաջարկեալ լուծման եղանակը ընդունիլ ու զանոնք օրակարգէ վերցընել: Որչափ ուրախ պիտի ըլլայի, եթէ այս շրջանին մէջ ալ խմբակցութիւնը նմանօրինակ համաձայնութիւնով բուէարկէին այն բոլոր կանոնադրներն ու խնդիրները, որոնք իրենց օրակարգը կը ծանրաբեռնեն:

Տեսարք երեսփոխանք, առիթը կը համարիմ ինձ ձեր ուշադրութեան յանձնելու այն արդիւնքն ու օգուտը՝ զոր Ազգ. վարչեց վերջին մէկ-երկու տարուան մէջ իրեն մէջ գոյացած համերաշխութեամբ: Այս համերաշխութեան յարաբերութիւնը կենսական պէտք մը կը նկատեմ ես եւ այսուհետեւ եւս. այս պատճառաւ կոչում կ'ընեմ ձեզ եւ զձեզ բոլոր ընտրողներուն որ ազգին այս կենսական օգուտը ուշադրութենէ չհեռացընէք: Պատկ. երեսփոխանութիւնը լաւագոյն օրինակը պէտքէ ըլլայ ազգին բոլոր խմբակցութիւններուն եւ կուսակցութիւններուն: Փափաքելի է որ փոխա-

դարձ զիջումներով համերաշխութիւնն եւ ազգին բարձրագոյն շահը միշտ ապահովուի:

Տեսարք երեսփոխանք, ձեր ազգասիրութեան է որ կոչում կ'ընեմ, բարձր բռնեցէ՛ք ազգին շահուն ու արժանապատուութեան դիմաց եւ մի թողուք որ ուրիշ կերպով վնասուի այն: Թուրքիոյ հայութեան ճակատագիրը կը վարէք դուք, ամբողջ հայութեան աչքերը ձեզի կը նային՝ տմէն անգամ որ այս տեղ կը հաւաքուիք: Ապագան զմեզ պիտի դատապարտէ, եթէ մեր պատասխանատուութիւնը ճշդութեամբ չըմբռնենք:

Կատարեալ հաւատք ունիմ, Տեսարք երեսփոխանք, երբ այժմ 1914-1915ի նոստաշրջանը կը բանամ, որ ազգին վստահութիւնը վայելող իրեն այս ազգասէր զաւակները իրենց բոլոր ջանքերը ի գործ պիտի դնեն արդիւնաւոր գործունէութեամբ մը իրենց եղբայրներուն տառապանքները թեթեւցնելու եւ անոնց լաւագոյն ապագայ մը ապահովելու: Ուստի, կը մաղթեմ որ դարերէ ի վեր զմեզ հովանաւորող մեր հարց Աստուածը իր հովանին անպակաս ընէ մեր սիրեցեալ ժողովրդեան վրայէն եւ զմեզ զօրացնէ մեր պարտականութեանց մէջ:

Հուսկ ուրեմն բանալով Ազգ. ժողովոյ ներկայ տարեշրջանը, կը շնորհաւորեմ զձեզ եւ կարողութիւն կը մաղթեմ:

(Ս. Պատրիարքը բացման ճառը արտասանելէ յետոյ, հրաւիրեց Արիստակէս էֆ. Գասպարեանը ատենապետելու եւ Կոպուհիկ էֆ. Խաչատուրեանը ատենադպրութեան պաշտօնը վարելու:)

ԱՏԵՆ. ԷՖ. — Ներքին կանոնադրը սահմանած է մեր այսօրուան աշխատութիւնը, բայց անկէ առաջ կարդանք Նոյն կանոնադրին յաւելածական Ա. յօդուածը:

«Ազգային ժողովոյ տարեկան չըջանի բացման նախագահական ճառին որ գը-

ԱՌԱՋԱՐԿ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

ԱՏԵՆ. ԷՖ. — Տ. Հմայեակ Ս. Զինւորագրութեան մասին գիր մը ունի, որ այս ժողովին մէջ վիճարանութեան դրուելէ առաջ պէտք է յղուի Վարչութեան:

(Ատենադպիր էֆ. Կարդաց հետեւեալ գիրը:)

Ազնուաշուք Ատենապետ էֆ.

Ազգ. երեսփ. ժողովոյ.

Զինուորական նոր օրէնքն իր բոլոր խտուրթիւններով կը ծանրանայ 18—19 տարեկանէն սկսեալ (յօդ. 2) պատանիններու եւ նորահաս երիտասարդներու վրայ:

Մեր թուրք հայրենակիցները տարիններէ ի վեր զինուորական ասպարէզի մէջ մարզուած պատերազմիկներ, կրնան թեւեւ այդ ծանրութիւնը կրել ու տոկալ. իսկ քրիստոնէից զինուորականութիւնն որ օսմանեան երկիրներու մէջ բոլորովին նոր բան մըն է, բոլորովին անվարժ եւ անընտել, չեն կարող իրենց մատղաշ հասակնուն զէնքի տակ մտնել:

Մուինի խնդիրն ալ որ նոր օրէնքով կուշուի բառնալ, իր մեծագոյն կարեւորութիւնն ունի, որքան նիւթական այնքան ալ բարոյական տեսակէտով. որովհետեւ քրիստոնէական ընտանեկան յարկերը տարբեր դրօշմն ունին, նեցուկը նեցուկ մնալու է, ինչպէս նաեւ զինուորական ծառայութիւնն իր տեղոյն վրայ կատարելու խնդիրը, զատ զատ խումբերու բաժնուած եւ ամէն մէկ խումբին մէջ քահանաներու անհրաժեշտ ներկայութիւնը, կիրակի եւ տօն օրերու արձակուրդի ընդարձակումը, զինուորին իր քրիստոնէական պարտականութիւնը կատարումը, ուսուցիչներուն զինուորական ծառայութենէ ազատ լինելն եւլն. եւլն:

Արդ, քանի որ, տակաւին զինուորական այս նոր օրէնքն օսմանեան խորհրդարանի ընտրութեան ու վաւերացման են-

րաւոր կերպով պէտք է ըլլայ, ժողովը կը պատասխանէ ուղերձով մը, զոր Ատենապետաց զիւանը կը ծրագրէ եւ ժողովը վիճարանութեամբ կը խմբագրէ իր երրորդ կամ չորրորդ նիստին մէջ, ուր Ս. Պատրիարքը փոխանորդով մը կը նախագահէ ժողովին: Սոյն ուղերձը Մայր զիւանի միջոցաւ կը ներկայացուի Ս. Պատրիարքին:

Ժողովի յիշեցնելէ յետոյ այս կանոնը, կը հարկադրուինք ձեռնարկել անմիջապէս զիւանի ընտրութեան, բայց անկէ առաջ երկու գիր կայ գիւանիս վրայ, որոնք կը հաղորդեմ ձեզ ի տեղեկութիւն միայն:

ՀԱՐՅՈՒՄ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆ. ԷՖ. — Նախ կարդանք Վարչութեան մէկ գիրը, որ ըստ օրինի պէտք է Նախաձեռնութեան զիւանին ղրկուի:

(Ատենադպիր էֆ. Կարդաց հետեւեալ գիրը:)

Ազնուաշուք Ատենապետ էֆ.

Ազգ. երեսփոխանական ժողովոյ

Երեսփոխանական ընտրութեան խնդրոյ մը առթիւ՝ Ազգ. վարչ. Խառն ժողովը ուշադրութեան առնելով Ազգ. Սահմանադրութեան 63րդ եւ 67րդ յօդուածներն, հարկ դատեց զիւան Պատկառելի ժողովոյ, եւ իբր օրինադիր մարմին՝ իւր մեկնութիւնն ստանալ թէ՛ աշխարհական ազգային անհատ մը երբ ամբաստանութեան ներքեւ գտնուի, կրնա՞յ երեսփոխանական ընտրող եւ ընտրելի ըլլալ, եւ կը խնդրէ իր հրահանգն այս մասին:

Մնամբ յարգանքը ի դիմաց Ազգային կեդր. Վարչութեան

Կրօն. ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ

Ս. Մ. Վ. Գաղազեան Եղիշե Ա. Եպիս. Դուր.

Բազ. ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ

Ն. Զաքարեան Տօք. Գ. Դաւիթեան

Թարկուած չէ, կը խնդրեմ որ Ազգ. Ժողովը բարեհաճի յանձնարարել Կեդր. Վարչութեան Խառն Ժողովոյ, փութով օսմ. խորհրդարանի հայ անդամաց հետ խորհակցութեամբ զինուորական նոր օրէնքի ծանրակշիռ կէտերը բարեփոխել տալու ազգութիւնները ձեռք առնել եւ մեր ընտանիքներն ու հայ երիտասարդութիւնը փրկել սպառնացող աղէտէ մը:

Նկատողութեան առնել պէտք է նաեւ Կեդր. Վարչութեան եւ օսման հետ խորհրդարանի հայ պատգամաւորաց կողմէն նահանգային օրէնքը, որ Հայաստանի երաշխաւորեալ բարենորոգումներու պէտքը գոհացնելու ոյժն ու հանգամանքը չունի:

Անշուշտ ազգին համար կենսական եւ զոյգ այս խնդիրներու եւ մանաւանդ Հայաստանի խոստացեալ բարենորոգումներու գործադրութեան մասին ձեռք բերուած յաջողութիւնները Կեդր. Վարչութիւնը պարբերաբար պիտի տեղեկագրէ Ազգ. Ժողովոյը, որուն անձկանօք կ'ըստատուի:

Աղօթարար

Հմայեակ Եպիս. Դիմաֆաեան

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԴԻԻԱՆԻ

ԱՏԵՆ. ԷՖ. — Ըստ կանոնի նախ պիտի կատարենք Ա. Ատենապետի ընտրութիւնը: Այժմ ներկայ երեսփոխանաց թիւը 66 է: Այսօրուան մեծամասնութիւնը 65 ըլլալով, Ժողովս քուէարկութեան ձեռնարկելու համար օրինական թիւն ունի:

(Քուէհամարի քննիչներ նշանակուելով եւ քուէարկութիւն տեղի ունենալով արգիւնքը եղաւ հետեւեալը)

Դարբիէլ Էֆ. Նորատուհեան	34 քուէ
Հրանտ « Ասատուր	23 «
Յարութիւն « Շահրիկեան	2 «
Տօքթ. Ն. « Տաղաւարեան	1 «

Յ. Էֆ. ՇԱՀՐԻԿԵԱՆ. — Կարգացուած քուէթուղթերու մէկ մասին մէջ, միայն Նորատուհեան մականունը նշանակուած

եւ այդ մականունով ուրիշ երեսփոխան գտնուած ըլլալով, անոնք միւս քուէներուն վրայ բարդել իրաւունք չէ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Այս դիտողութիւնը կրկնող կայ:

Ժ. ՍԱՅԱՊԱԼԵԱՆ ԷՖ. — Ճիշտ է

ՁԱՅՆԵՐ. — Կը հաւանինք:

Ա. ԱԼՊՈՅԱՆԸԱՆ. — Միւս Նորատուհեան Էֆ.ին Ատենապետութեան ընտրելի էր:

Օ. ՉԻՖՏԷՍԱՐԱՆ ԷՖ. — Այսպիսի առարկութիւն մը բոլորովին անտեղի է եւ Ժողովին ժամաւաճառութիւն պատճառելէ դատ ուրիշ արգիւնք չունենար:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ինչ որ ալ ըլլայ, եղած դիտողութիւնը կանոնական է եւ որովհետեւ կրկնողներ ալ կան, հարկադրուած եմ նոր ընտրութիւն կատարելու: Բայց այս անգամ ընտրութիւնը պիտի կատարուի երկու առաւելագոյն քուէ ստացողներու վրայ, որովհետեւ մենք կատարուած գործողութիւնը բոլորովին չենք կրնար չեղեալ համարել, այլ միայն Նորատուհեան գրուած քուէները ջնջել եւ այդ պարագային մէջ մեծամասնութիւն չկալեալով զոյանալ համեմատականի կը մնայ ընտրութիւնը: Ուստի հիմայ քուէ պիտի տրուի Նորատուհեան եւ Հ. Ասատուր Էֆ.ներու համար միայն:

(Քուէարկութիւն եւ քուէհամար կատարուելով ընտրութեան արգիւնքը եղաւ հետեւեալը)

ԱՏԵՆ. ԷՖ. — Թիւ քուէարկուաց	61
Դարբիէլ Էֆ. Նորատուհեան	34 քուէ
Հրանտ « Ասատուր	27 «

Հետեւաբար քուէից բացարձակ առաւելութեամբ Ազգ. Ժողովի Ա. Ատենապետ կը հռչակենք ԳԱՅՐԻԷԼ ԷՖ. ՆՈՐԱՏՈՒԿԵԱՆ:

Հիմայ պիտի կատարենք երկու դերատենապետներու ու յետոյ ատենադպիրներու ընտրութիւնը:

(Արդիւնք փութարկութեան)

Հ. Խօճասարեան Էֆ.	29 քուէ
Հ. Պօյաճեան «	27 «
Պ. Փափազեան «	13 «
Հ. Ասատուր «	5 «
Ն. Տաղաւարեան «	2 «
Գ. Զօհրապ «	1 «
Ս. Էսմէրեան «	1 «

(Ապա ձեռնարկուելով ատենադպիրներու ընտրութեան արգիւնքը եղաւ հետեւեալը)

Յ. Աւետիսեան	25 քուէ
Ա. Անտոնեան «	22 «
Գ. Սիմքէշեան «	19 «
Հ. Արամեանց «	8 «
Ե. Պէյազճեան «	8 «
Օ. Մինասեան «	8 «
Ա. Փանոսեան «	5 «
Կ. Ուշատուրեան «	3 «

ԱՏԵՆ. ԷՖ. — Կատարուած քուէարկութեան արգիւնքով Բ. դերատենապետ կը հռչակենք Հայկ Էֆ. Խօճասարեանը եւ Գ. դերատենապետ Հ. Էֆ. Պօյաճեան, Ա. ատենադպիր Յակոբ Էֆ. Աւետիսեանը, Բ. ատենադպիր Արամ Անտոնեան եւ Գ. ատենադպիր Գէորգ Էֆ. Սիմքէշեան:

Յաջորդ նիստը ըստ կանոնի մէկ շաբաթէն գումարելու որոշմամբ ատենար կը փակենք:

Առժ. Ատենադպիր Առժ. Ատենապետ

Կ. Խաչատուրեան Ա. Գապարեան

(Գ. Վիճակ)

Գում գարու, Գումգարուի դուրս

69. Դաւիթ էֆենտի Տէր-Մովսէսեան
70. Համբարձում » Պոյաճեան
71. Սարգիս » Սուրն
72.

Կէտիկ փաշա

73. Հմայիակ էֆենտի Արամեանց
74. Յարութիւն » Ճանկիւեան
75. Յակոբ » Աւետիսեան
76. Յակոբ » Նշանեան
77. Ներսէս » Զաքարեան

Սամաթիա Ս. Գէորգ

78. Գրիգոր էֆենտի Զօհրապ
79. Լեւոն » Սաթմեան
80. Հայկ » Խօճասարեան
81. Պարգեւ » Փափազեան
82. Լեւոն » Սեղրոսեան
83. Ռուբէն » Փափազեան
84:

(Ե. Վիճակ)

Գուգլունճուկ-Իճատիէ

85. Երուանդ էֆենտի Խորասան
86. Լեւոն » Տէմիրճիպաշեան
87. Ռուբէն » Զարդարեան
88. Ոսկան » Մարտիկեան
89. Կոպեռնիկ » Խաչատուրեան

Թով-գարու

90. Գէորգ էֆենտի Սիմէշեան

Ղալաթիա-Պէլքօզ

91. Երուանդ էֆենտի Օտեան

Նաուլ-գարու

92. Նշան էֆենտի Գալպեան
93. Տիգրան » Մանուկեան

Սամաթիա Ալթըմէրմէր

94. Պետրոս էֆենտի Գալփեան

Սկիւտար Ս. Խաչ

95. Բարսեղ էֆենտի Աւետիսեան
96. Գարեգին » Տէմիրճիպաշեան
97. Յարութիւն » Շահրիկեան
98. Վարդգէս » Սէրենկիւիան
96. Յակոբ » Մինասեան

Բումէլի-Ֆիսար, Պոյաճը-գիւղ, Եէնի-գիւղ

100. Արքայազն էֆենտի Տէր Յակոբեան

ԳԱԻԱՌԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻԱՆԵՐ

(Ա. Վիճակ)

Եգիպտոս

101. Վահան էֆենտի Թէքեան

Եւդոկիա

102. Յակոբ էֆենտի Պօնտուգեան

Խարբերդ

103. Տօբթ. Փաշայեան էֆենտի

Կարին

104. Սողոմոն էֆենտի Տէր-Ազարեան

Կիրին-Մանճըթ

105. Արամ էֆենտի Անգոնեան

Մուշ

106. Գեղամ էֆենտի Տէր-Կարապետեան
Զմշկաձագ-Չարսանճագ

Տրապիզոն

108. Օնիկ էֆենտի Զիֆթէ-Սարաֆ

(Բ. Վիճակ)

Աղթամար

109. Ա. Վառմեան էֆենտի

Բալու

110. Գամէր էֆենտի Շիրինեան

Եօզրատ

111. Աւետիս էֆենտի Ճինիկիւեան

Կեսարիա

112. Վահան էֆենտի Էսաեան

Հալէպ-Այնթապ

113. Սարգիս էֆենտի Գնաճեան

Նիկովիդիա

- 114.

Պաղտատ

115. Տօբթ. Ներսէս էֆենտի Թիւեան

Սղերդ

116. Սերովբէ էֆենտի Նորատունկեան

(Գ. Վիճակ)

Ակն

117. Ատովմ էֆենտի Երեցեան

Արարկիր

118. Արթաբի էֆենտի Սարաֆեան

Եդեսիա

119. Սեպուհ պէյ Իւթիւսեան

Զզմիւռնիա

120. Լեւոն էֆենտի Տնտեսեան

Հաճըն

121. Տէվէթ էֆենտի Տատրեան

Մալաթիա

- 122.

Պանտրմա-Պալքէսիր

123. Տիրան էֆենտի Երկանեան

Վան

- 124.

(Դ. Վիճակ)

Ադրիանուպոլիս

- 125

Ատանա

126. Արիստակէս էֆենտի Գասպարեան

Բաղէշ

127. Ալէքսանդր էֆենտի Փանոսեան

Կուտինա — Աֆիօն-Դարա-Ֆիսար

128. Զարեհ էֆենտի Խորասանեան



Պրուսա		Գաղաստիա	
129	Գասպար Էֆէնտի Նեմց	135.	ՏՐ. Խաչիկ Էֆէնտի Պօլոսեան
	Ռօտոսթօ		Իոնեսա
130.	Միհրդատ Էֆէնտի Հալկազն	136.	Բարթոլ Էֆէնտի Զօրեան
	Տիգրանակերտ		Երզնկա
131.	Տիգրան Էֆէնտի Նազաշեան	137.	Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան
	Տիվրիկ		Մարաշ—Ջէյթուն
132.	(Ե. Վիհակ)	138.	Սմբատ Էֆէնտի Բիւրատ
	Ամասիա—Մարզուան		Շապին—Գարահիսար
133.	Տիգրան Էֆէնտի Մարտիկեան	139.	Ժագ Էֆէնտի Սալապալեան
	Բաբերդ		Սերաստիա
134.	Յարութիւն Էֆէնտի Դարբինեան	140	Տօբթ. Նազարէթ Էֆէնտի Տաղաւարեան

Գ Ի Ն 1 Ղ Ր Ո Ւ Շ

Սեփականութիւն Ազգ. Սնտուկին, Ազգ. Ժողովոյ ծախուց յատկացեալ
Կը ծախուի յազգային Խորհրդարան Ղալաթիոյ